ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«01» 04 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 040-26

Նախաձեռնող՝ *«ՇԻՆՏՐԵՍՏ» ՍՊԸ*

Գործունեությունը՝ *Ոչ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանում*
Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Արաքսավան բնակավայր

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 040-26

«01» ապրիլի 2026թ.

Արաքսավան-77 կոպճային ավազի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՇԻՆՏՐԵՍՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Արաքսավան բնակավայր

Ներածական մաս. «ՇԻՆՏՐԵՍՏ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել Արաքսավան-77 կոպճային ավազի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Վարչական տեսակետից Արաքսավան-77 կոպճային ավազի հանքավայրը վարչատնտեսական առումով գտնվում է Արարատի մարզի Արաքսավան գյուղից 1.5 կմ արևմուտք (ուղիղ գծով) Հրազդան գետի ձախափնյա մասում:

Հանքավայրի մոտակա բնակավայրերն են Արարատ, Վեդի քաղաքները, Արաքսավան բնակավայրը, վերջինս հանքավայրի հետ կապված է բարեկարգ գրունտային ավտոճանապարհով:

Լեռնագրային տեսակետից հանքավայրի տարածքը հարում է միջինարաքսյան միջլեռնային իջվածքի Արարատյան գոգավորության համանուն դաշտավայրի կենտրո-նական մասին, տարածքի մակերևույթի ռելիեֆը հարթ է, գտնվում է 820-822 մ բացարձակ բարձրությունների վրա:

Հանքավայրի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝
- հյուսիսային լայնությունը՝ 39⁰ 59′40″
- արևելյան երկայնությունը՝ 44⁰ 26′45″

Արաքսավան-77 կոպճային ավազի հանքավայրը ծագումնաբանորեն կապված է Արարատյան դաշտավայրի առաջին(ստորին) դարավանդի նստվածքային առաջացումների հետ և ունի պարզ երկրաբանական կառուցվածք:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից դելյու վիալ-պրոլյուվիալ կավավազային առաջացումները և Արարատյան դաշտավայրի առաջին լճային դարավանդի վերին չորրորդականի ավազային ու ավազակավային նստվածքները:

Արարատի մարզի Արաքսավան-77 կոպճային ավազի հանքավայրի պաշարները հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի ապրիլի 18-ի N 719-Ա հրամանով, 01.04.2024 թվականի դրությամբ հիմք ընդունելով ՀՀ ՏԿԵ նախարարության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի 2025թ. ապրիլի 8-ի N 97 փորձագիտական եզրակացությունը:

Արաքսավան-77 հանքավայրի կոպճային ավազները համախառն միջին բոլոր որակական ցուցանիշներով բավարարում են «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ԳՕՍՏ-ի պահանջներին և կարող են բնական վիճակում օգտագործվել որպես լցանյութ ծանր բետոնի, շաղախների, ասֆալտաբետոնի, ինչպես նաև ճանապարհային և այլ տեսակի շինարարկան աշխատանքների համար:

Բացահանքի եզրագծի ծայրակետերի կոորդինատներն WGS-84 (ARMREF 02) կոորդինատային համակարգով հետևյալն են՝

1.	4429567.616	8452458.891	10.	4429222.016	8452685.647
2.	4429572.435	8452520.597	11.	4429112.245	8452733.390
3.	4429585.174	8452550.963	12.	4429076.423	8452672.983
4.	4429602.528	8452601.905	13.	4429091.663	8452585.883
5.	4429625.969	8452641.819	14.	4429225.138	8452565.754
6.	4429601.847	8452657.293	15.	4429319.488	8452559.110
7.	4429487.822	8452580.455	16.	4429367.320	8452544.151
8.	4429410.705	8452592.958	17.	4429497.363	8452461.882
9.	4429337.198	8452630.829			

Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ գտնվող ջրային օբյեկտը Հրազդան գետն է՝ մոտ 10-25 մ հեռավորության վրա:

Հայցվող տեղամասի հյուսիսային և արևմտյան կողմով 10-50 մ հեռավորության վրա հոսում է Հրազդան գետը, արևելյան սահմանին զուգահեռ մոտ 25-30 մ հեռավորության վրա անցնում է Արարատյան դաշտավայրի ոռոգման համակարգի մաս հանդիսացող ջրանցք, 750 մ հեռավորության վրա հանքավայրից հյուսիս-արևմուտք գտնվում է գործող ձկնաբուծարան:

Բացահանքի հյուսիսային մասում գետի մակարդակը ունի 818,2 մ, իսկ հարավ-արևմտյան կողմում 817,7 մ նիշ: Բացահանքի վերին մակերեսի և գետի նիշերի տարբերությունը կազմում է 2,8-3,5 մ:

Արաքս և Մեծամոր գետերը գտնվում են համապատասխանաբար 1,0 կմ և 4,0 կմ հեռավորությունների վրա:

Նախատեսվող գործունեության տարածքում օգտակար հաստվածքը մասամբ ջրակալված է: Գրունտային ջրերի առկայություն դիտարկվել բոլոր փորվածքներում՝ սկսած ավազների շերտի առաստաղից 0.1-2.4 մ խորություններում, ավազակուտակի վերին մասերում, ավազը գտնվում է խոնավ վիճակում, գրունտային ջրերի խորությունը հետախուզահորերում կազմում է 2.1-ից 4.0 մ:

Լեռնային աշխատանքների կազմակերպման և կոպճային ավազի արդյունահանումն իրականացնելու համար նախատեսվում է հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները՝ մոտեցող բնահողային ավտոճանապարհի կառուցում, աշխատանքային հրապարակի կարգաբերում, արդյունաբերական հրապարակի կարգաբերում, դրենաժային առվի կառուցում և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքները իրականացվել և պաշարները հաստատվել են հյուսիսային կողմում թողնելով Հրազդան գետի ափից ընդամենը 8-14 մ հեռավորություն, հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է սկսել հանքավայրի հարավային կողմից թողնելով հյուսիսային կողմի պաշարների արդյունահանումը վերջին 2 տարվան:

Հանքավայրի շահագործումը կիրականացվի ընդլայնական ընթացքաշերտերով միակողանի մշակման համակարգով:

Հանքավայրի մշակման համակարգը ունի հետևյալ տարրերը՝
- աստիճանի բարձրությունը միջինը՝ 6.88 մ,
- աստիճանի թեքության անկյունը՝
  աշխատանքային՝ 40^0,
  ոչ աշխատանքային (մարված)՝ 30^0,
- ընթացքաշերտի լայնությունը՝ 18.0 մ,
- էքսկավատորի աշխատանքի անվտանգ գոտու շառավիղը՝ 18.0 մ,
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 17.0 մ:

Հանքավայրը գետառողողատային տիպի է և ներկայացված է կոպճային ավազի ապարների ժամանակակից հունային նստվածքներով: Ծածկող ապարները ներկայացված են բուսահողով և ավազակավերով, որոնց ընդհանուր հզորությունը տատանվում է 0.0-3.3 մ սահմաններում, կազմելով միջինը հանքավայրում 2.35 մ, այդ թվում 0.32 մ հողաբուսական շերտ և 2.03 մ կավավազներ: Ծածկող ապարների ծավալը կազմում է 136.1 հազ.մ^3, այդ թվում հողաբուսական շերտը՝ 18.5 հազ.մ^3, կավավազները՝ 117.6 հազ.մ^3:

Բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝
- ամենամեծ երկարությունը՝ 523 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 204 մ,
- ամենամեծ խորությունը՝ 7.6 մ,
- օտարման տարածքը՝ 5.79 հա:

Բացահանքի ծառայման ժամկետը նախատեսվում է 11.44 տարի:

Արաքսավան-77 կոպճային ավազի հանքավայրի սահմաններում հաշվարկվել են ավազ շինարարական աշխատանքների համար (ГОUS 8736-2014) 268200 մ^3 A կարգի հաշվեկշռային պաշարներ:

Բացահանքի մարվող պաշարները կկազմեն՝ 268200 մ^3, տարեկան արտադրողականությունը՝ շահագործման 1-ին տարում՝ 12270 մ^3 կոպճային ավազ մարվող պաշար, շահագործման 2-11.44 տարիներին՝ տարեկան՝ 24540 մ^3 մարվող պաշար:

Օգտակար հանածոյի կորզվող պաշարները կկազմեն 218570 մ^3, տարեկան արտադրողականությունը՝ շահագործման 1-ին տարում՝ 10000 մ^3, շահագործման 2-11.44 տարիներին՝ տարեկան՝ 20000 մ^3:

Բացահանքում օգտակար հանածոյի արդյունահանման տեխնոլոգիաների հետ կապված կարող են առաջանալ մթնոլորտ արտանետվող վնասակար գազեր (ազատի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) և փոշի: Հանքավայրում վնասակար գազերի աղբյուր կհանդիսանան բացահանքը, տրանսպորտը, լցակույտը:

Բացահանքի շահագործման ընթացքում հանքավայրի տարածքում հանքարդյունահանման թափոններ կհանդիսանան մակաբացման ապարները:

Շահագործման ընթացքում կառաջանան նաև բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են մեխանիզմներում փոխվող հնացած յուղերը, քսայուղերը, կենցաղային աղբը: Թափոնների քանակի, վտանգավորության դասի, ծածկագրերի և կառավարմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է գնահատման հաշվետվությունում և հաշվետվությանը կից թափոնների կառավարման պլանում:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման, նվազեցման նպատակով, հնարավոր վթարային իրավիճակների, բնական

աղետների և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների և աղմուկի առաջացման դեպքերում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության մեղմացմանն ու կանխարգելմանն ուղղված մշտադիտարկումներ:

Պատճառաբանական մաս. Արարատի մարզի Արաքսավան-77 կոպճային ավազի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Արաքսավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, պաշտպանության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, պաշտպանության նախարարությունից, ազգային անվտանգության ծառայությունից, Արարատի մարզպետարանից, Արտաշատի համայնքապետարանից և շրաջակա միջավայրի նախարաության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում:

Փորձաքննական հիմնավորումներ. փորձաքննական գործընթացում պաշտպանության նախարարության կողմից ստացված կարծիքի համաձայն՝ ընկերության կողմից արդյունահանման համար հայցվող հողատարածքը որոշ հատվածում մոտ է գտնվում Հրազդան գետի ափամերձ հատվածին և առաջարկվել է ընկերությանը, որպեսզի վերանայվի հայցվող հողտարածքի սահմանները և ափամերձ հատվածից ապահովել առնվազն 20 մ հեռավորություն՝ հետագայում Հրազդան գետի հունի հնարավոր փոփոխություններից զերծ մնալու համար (մինչդեռ ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծում Հրազդան գետից հայցվող տարածքի ամենամոտ գտնվելու հեռավորությունը կազմել է 8 մ, ինչը պարզվել է նաև գործունեության տարածքում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղազննման աշխատանքների իրականացման ընթացքում) ինչը հաշվի չի առնվել ընկերության կողմից նարկայացված նախագծում: Հայցվող հողատարածքը ներառում է 4 կադաստրային ծածկագրերով հողամասեր, որոնցից միայն 2-ն են հանդիասնում ընկերության սեփականությունը, իսկ մյուս հողամասերի վերաբերյալ ՇՄԱԳ հաշվետվությունում տեղակատվություն առկա չի եղել:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՇԻՆՏՐԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արաքսավան-77 կոպճային ավազի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան